

ձեզ յանձն եղեալ պաշտաման հոգեւորական պարտաւորութեան, ուստի 'ի վարձ հարազատութեանց ձեր պսակեցաք զձեզ լանջական Խաչիւ, այժմ եւս աներկբայ գոլով մեր՝ եթէ կայք դուք դարձեալ 'ի նոյն արիական ջերմեռանդութեան եւ օր քան զօր ջանադիր էք եւ եւս հանդիսանալ հաւատարմութեամբ կարգեցաք զձեզ ընդհանրական վէքիլ եւ կառավար վիճակիդ այդորիկ եւ վանացո, քանզի որովհետեւ յաջորդն տեղւոյդ Պետրոս վարդապետն խնդրամատոյց եղեալ առ մեզ կամեցաւ հրատեշտ տալ 'ի գործոյն եւ գնալ յԱթոռն, վասնորոյ գրեցաք առ տեղւոյդ երեւելի մերագնեայ իշխանսն, զի զամենայն զհաշիւ շարժական եւ անշարժ կայից վանացն եւ մնացեալ եկամտից արդեանց յաջորդութեան ներկայութեամն իւրեանց ստացեն տումարաւ 'ի յաջորդէն եւ յանձնեսցեն ձեզ:

Ապաքէն եւ դուք ըստ հրամանի մերում ընկալեալ զայն ամենայն ունիք ամենայն հաւատարմութեամբ եւ հարազատութեամբ պահպանել եւ կառավարել զվանսն, ժողովել եւ պահպանել զամենատեսակ արդիւնս յաջորդութեան, մանաւանդ ունել պահպանութիւն այգւոյ վանացն, եւ անցուցանել 'ի տումար ըստ իւրաքանչիւր յատկութեանցն, եւ պահպանել մինչեւ ցալուստ նորոգ առաջնորդ Արք եպիսկոպոսին՝ զոր առաքելոց եմք եւ ապա յայնժամ ունիք յանձնել նմա ամենայն հաւատարմութեամբ:

Եմք եւ մնաւք ըարեցակամ առ ձեզ
ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՅՈՎՀԱՆՆԷՍ:

Համար 150
1836, մայիս 14
ի Տփլիս: